



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ՊԱՏԻԱՀՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Կոմէդիայ մի արարածով Բրակեյի

Արտատպւաժ «Տարագ» շաբաթաթերթից



Փոխադրութիւն
η. ջԱԼԱԼԵԱՆԻ



Թ Ի Գ Լ Ի Զ

Տիպոգրաֆія Т-ва «Վերեչевъ и Каменмакеръ»
* Տպարան ընկ. «Վերեկիշևъ»

Михайловск. пр., № 81. Телеф. № 852.

ագրա-թու, "Եղբ պայ" Վազօք,

№ 62. Աղբիւ - Տարագի երաժարակութիւն № 62.

85

բ 99


ԴՊԱՏԻԱՀՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Կոմեդիայ մի սրարւածով Բակկօյի

Արտատպւած «Տարագ» շաբաթաթերթից



Փոխադրութիւն
Կ. ԶԱԼԱՆԵՍԻՆԻ



Թ Ի Փ Լ Ի Զ

Տիպոգրիա Տ-va «Վերենչե» և * Տպալսան ընկ. «Վերենչ» և
Կամենմախերъ * Կամենմախերъ
Михайловск. пр., № 18. Телеф. № 852.



6 MAR 2013

31 MAY 2006

19 NOV 2010

ՊԱՏԻԱԽՈՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Կոմեղիա մի արարածով, Բրակեյի:

(Φοίνικαὶ οὐτόπερ θῆται)

ԴՐԱՄԱ

Վարդանով, Վասակի

496

Մանան, սղակին:

Дозв. ценз. Тифлисъ. 11-го июля 1902 г.

Ա.ՅԱ. Հափազանց գեղեցկալէմ, ջղային, կայտառ, բայց,
յամախի իր մէջ կենտրոնացող, 28 տարեկան: **Վարդանովյա, սիրու-**
լատես, վայելուշ շարժումներից գլորք, ումկական ծեւերով, գա-
լառականի տիպար, 25 տարեկան:

Ճքեղ կահաւորւած ընդունաբանն: Դուռը ուզգակի հանդիսա-
կանների վկմը, բեմի խորքում: Միւս դուռը աչ, իսկ երբորդը ձախ
կողմում: Մի պատի վրայ հեռախօսի գործիք:

Digitized by srujanika@gmail.com

Ա.ՅԱՎԻ ստուծէ, ծեղթեռվ երեսը ծածկած, սրա աչերը
կարմրած են արտասույներից, մազերը փոքր ենչ գզզւած են:
Վարդանը արագ արագ բայլում է թեմի վրայ:

Վարդան: (վեր է տոնում արոններից մեկը
եւ շարտում յատակի վրայ: Նարունակում է
խայլել): Այդպէս ուրեմն մենք բաժանունք ենք:

Աննա: Ոչ աւելի և ոչ պակաս: Քեզ մնում է միայն, եթէ այդ հարկաւոր ես համարում, դիմել փաստաբանի, թէ նօտարի, իսկոյն և եթ մեր գործերը կարգի բերելու: Թէպէտ դա ինձ համար նշանաւոր բան չէ:

Վարդան: Ինձ համար նոյնպէս:

Աննա: Աւելի լաւ: Բաժանումն մեր բոլոր բարիքների:

Վարդան: Եւ շարիքների: (շարունակում է քայլել, նա վեր է առնում մի արոռ ել եւ խփում յատակին):

Աննա: Կարիք չըկայ աթոռները ջարդելու: Վարդան: Զամես, այս քո տունն է: Այս քո՞ կահ կարասիներն են: Այս քո՞ աթոռներն են:

Աննա: Ցոյսով հմ, դրանով դու չես ուզում ասել, որ ես այստեղ ընակում եմ՝ որպէս մի հիւրանոցում:

Վարդան: Ոչ, ես այդ չեմ ասի, իմ կնոշ համար ես հիւրանոցատէր չեմ, բայց այստեղ ամեն ինչ, մինչև մի չնշին բանը—իմ սեպհականութիւնս է:

Աննա: Խնդրեմ չըմոռանաս, որ ես հետս բաժինք եմ բերել:

Վարդան: Խնդրում եմ քեզ, չըմոռանաս, որ այդ բաժինքը հաղիւ է բաւում քո հագուստին և քաղցրեղէններին:

Աննա: Քո խօսքով՝ ու պէտք է վճարեմ և քո դերձակին, այնպէս չէ:

Վարդան: Դու լաւ գիտես, որ ես այն մարդկանցից չեմ, որոնք թոյլ են տալիս կանանց ամուսինների համար հագուստեղին առնել:

Աննա: Իսկ ես այն կանանցից չեմ... որոնք թալանում են իրանց ամուսիններին:

Վարդան (նստելով): Այդպէս ուրեմն, մենք բաժանում ենք:

Աննա: Այդ արդէն վճռած է:

Վարդան (մի փոքր լուրջիւնից յետոյ): Ի՞նչ պէտք է ասենք ժողովրդին:

Աննա: Մեզանից իւրաքանչիւրը կասէ, ինչ որ ինքը կամենայ:

Վարդան: Է՛, ոչ: Մենք պէտք է համաձայնութիւն կայցանենք:

Աննա: Ճշմարտութիւնն ասենք:

Վարդան: Ես պատրաստ եմ իմ աշքերիս մէկը զոհել, միայն կարողանամ իմանալ, թէ որն է այդ ճշմարտութիւնը:

Աննա: Ճշմարտութիւնն այն է, որ մեր բնաւորութիւնները չըյարմարեցին իրար:

Վարդան: Ոչ, այդ բոլորովին ճիշտ չէ:

Աննա: Ես կարծում էի միշտ, որ իմ ու քո մէջ ոչ մի ընդհանուր կապ չըկայ:

Վարդան: Բայց զբանով դու փաստերն ես
հերքում:

Աննա: Իսկ այդ փաստերը՝ ի՞նչ են ապա-
ցուցանում:

Վարդան: Ապացուցանում են, որ մենք սի-
րում էինք իրար:

Աննա: Ե՞րբ:

Վարդան: Միթէ մենք չէինք սիրում իրար՝
մեր ամուսնութեան երեք տարւան ընթացքում:

Աննա: Երբէք:

Վարդան: Մինչև անգամ մեր հարսանիքի
առաջին ամիսը:

Աննա: Հարսանիքի առաջին ամիսը հաշիւ
չէ:

Վարդան: Ի՞նչպէս թէ հաշիւ չէ:

Աննա: Այն, այն: Հարսանիքի առաջին ա-
միսը—լոկ ձեականութիւն է:

Վարդան: Բայց այդ ձեականութիւնը մի-
քանի թեթև փոփոխութիւններով շարունակում
էր մինչև երեկեան օրը:

Աննա: Մինչև երեկեան օրը շարունակում
էր պարտաճանաշութիւնը:

Վարդան: Եւ քո այդ պարտաճանաշութիւ-
նը, ինչպէս երկում է, վերջացաւ:

Աննա: Իհարկէ: Ամեն պարտաճանաշու-
թիւն իր սահմանն ունի: Մէկը զինոր է զըւում,

միւսը պաշտօնեայ է դառնում և նրա պարտա-
կանութիւնն այն է, որ նա իր պաշտօնը լաւ
կատարէ: Աղջիկը ամուսին է դառնում—այստեղ
միւնոյնն է կատարւում: Ես ամուսնու պաշտօնը
լաւ էի կատարում: Բայց իմ ամբողջ կեանքս
այդ անել՝ ոչ: Զինոր, պաշտօնեայ, ամուսին
յայտնի ժամանակամիջոցից յետոյ իրաւունք
ունեն ծառայութիւնից դուքս գալ: Եւ ահա ես
էլ ծառայութիւնից դուքս եմ գալիս:

Վարդան: Այլապէս ասած, եթէ ես այսօր
պահանջէի քեզանից այն՝ ինչ ամեն մի ամուսին
կարող է պահանջել իր կնոջից... դու ինչ կա-
սէիր՝ «ո՞չ»:

Աննա: Իհարկէ:

Վարդան: Բայց ես կարող էի հարկադրել
քեզ:

Աննա: Հարկադրել:

Վարդան: Օրէնքների ժողովածուն ձեռքիս
է, եթէ կամենաս:

Աննա: Բան ես ասում: Բարեբախտաբար
օրէնքները չեն պարապում այդ գործերով:

Վարդան: Դու այդպէս ես կարծում: Բայց
պէտք է օրէնքների իմաստը հասկանալ, իմ սի-
րելիս: Կայ յօդած, որն ասում է «կինը պէտք
է հետեւի իր ամուսնուն»:

Աննա: Ո՞ւր հետեւի:

Վարդան: Ուր և լինի:

Աննա: Զըկայ ոչ մի դրութիւն, երբ կինը
չըկարողանայ ասել՝ «ոչ»:

Վարդան: Ա՛, չըկայ ոչ մի դրութիւն, ոչ
մի դրութիւն: (լուսիքին: Վեր է կենում տե-
ղից: Քայլում է սենեակում: Կանգնում է եւ
նսում է կնոջից հեռու: Յետոյ հրամայական
ձեւով): Աննա, եկ այստեղ, համբուրք ինձ:

Աննա: (իր տեղը նսած նայում է առա-
սադին):

Վարդան: (Երկար լուսիքինից յետոյ): Աննա,
եկ այստեղ, համբուրք ինձ:

Աննա: Բեր քո օրինազիրքը:

Վարդան: Զգոյշ կաց, դա կարող է շատ
վատ վերջանալ:

Աննա: Միայն թէ վերջանայ և ես գոհ կը-
լինեմ:

Վարդան: Ուրեմն դու ատում ես ինձ:

Աննա: Ես աղատութիւն եմ ուզում:

Վարդան: Ինչո՞ւ համար:

Աննա: Կրտեսնես:

Վարդան: Որ իմ դէմ խարդախութիւն գոր-
ծես:

Աննա: Ի՞նչ գատարկ բան: Միթէ հարկա-
ւոր է ամուսնուց բաժանուել նրան խարդախելու

համար: Ընդհակառակը. ուր բաժանուել կայ,
այնտեղ խարդախութիւն չըկայ:

Վարդան: Դու խօսում ես անառակացած
կնոջ նման:

Աննա: Իսկ դու միամիտ մարդու նման:

Վարդան: Ինչո՞ւ չես ասում, յիմարի նման:

Աննա: Յօժարութիւնով կասեմ:

Վարդան: Ուրեմն դու ինձ յիմար անունն
էլ ես տալիս:

Աննա: Տալիս եմ քո կամքով:

Վարդան: Ո՞հ, այդ արդէն չափից դուքս է:
(վեր է բռչում տեղից):

Աննա: Ինչո՞ւ ինձ չես թակում:

Վարդան: Ես զգում եմ, որ արիմը գլուխս
է խփում: Ես չեմ կարող ինձ զսպել, դառնում
եմ անիրաւ... անպիտան (կատաղած ապտա-
կում է ինքն իրան): Դէ, հիմա ես հանգստացայ:

Աննա: Ես էլ:

Վարդան: Բայց այս անզամ՝ վերջ:

Աննա: Փառք Աստուծոյ:

Վարդան: (վեր է առնում գդակը եւ յան-
կարծ մօսկանում է կնոջը): Զես ուզում ինձա-
նից ներողութիւն խնդրել:

Աննա: Ոչ:

Վարդան: Ուզում ես, որ ես ներողութիւն
խնդրեմ քեզանից:

Աննա: Ոչ:

Վարդան: 2ես ուզում ինձ համբուրել:

Աննա: Ոչ:

Վարդան: 2ես ուզում ինձանից համբոյը
ստանալ:

Աննա: Ոչ:

Վարդան: Ուզում ես հաշտել:

Աննա: Ոչ:

Վարդան: Դու ուզում ես, որ ես դժւրս
գնամ:

Աննա: Այո:

Վարդան: Մնաս բարեաւ: (դուրս է փախ-
չում):

Աննա: Վերջապէս:

Ե Ր Ե Ւ Ո Յ Թ Ա

Աննա եւ Վասակ:

Աննա: (միայնակ: Գնում է հեռախօսի
մօս: Դարձնում է զանգակի կորը: Նրան պա-
տասխանում էն): Միացրէք 623 համարի հետ:
(Լուրին. 623 համարը պատասխանում է:
Աննան հեռախօսի փողը դնում է ականչին):
Ո՞վ է հեռագրախօսի մօս: (Լուրին): Ա, այդ
դժւ ես Վարդանոյշ: (Լուրին): Քո ամուսինը
տանը չէ: (Լուրին): Ընորհակալ եմ, ես ու-
զում էի միայն մի նորութիւն յայտնել նրան:

(Լուրին): Օ՛, իհարկէ, ես քեզ էլ էի ուզում
յայտնել և բոլոր իմ բարեկամներին: (Լուրին):
Կարճ խօսքով, ահա բանը—մենք ամուսնուս հետ
կուեցինք և բաժանեում ենք: (Լուրին): Ոչ, զա
անօգուտ է, քեզ ոչ ինչ չի յաշողի: Բայց թէ, եկ,
եթէ կամենում ես, միևնոյն է մենք չենք հաշտոի,
դու միայն կըկորցնես ժամանակդ և խօսքերդ:
(Լուրին): Ինձ չես հաւատում: (Լուրին):

Ներս է մտնում Վասակը թեմի խորքում գտնած դռնից.
Աննան նրան չէ տեսնում:

Աննա: (դեռ եւս հեռախօսի մօս): Հաւա-
տացնում եմ քեզ, երգում եմ քեզ:

Վասակը (մօսկանում է նրան բամակից եւ
նրա վիզը համբուրում):

Աննա (ըուռ զալով): Ա, այդ դժւ ես:

Վասակ: Այդ ինչի ես դու երգում:

Աննա: Կամաց, ես քո կնոջ հետ եմ խօսում:

Վասակ: Այս, զրոյք ձեզ տանի (զգուշու-
թիւնով հեռանում է, կարծես կինը կառող է
իրան տեսնել հեռախօսի միջով):

Աննա: (հեռախօսի փողը ականչին): Այո,
դրա մասին ասա քո ամուսնուն: Դու նրան ին-
ձանից առաջ կըտեսնես:

Վասակ. (համարեա ինքն իրան): Իսկ ես
այստեղ եմ:

Աննա (վերջացնելով հեռախօսելը): Նա

այնքան սրտակից բարեկամ է Վարդանին, որ այդ
լուրը նրան շատ հետաքրքիր կը լինի. Ցտեսու-
թիւն: (դարձնում է զանգակի կոթը, խօսակ-
ցուրիւնը ընդհատելու համար):

Վասակ: Ի՞նչ է ասելու ինձ: Ի՞նչ է պատահել:

Աննա: Դու լսեցիր:

Վասակ: Ոչ:

Աննա: Եւ չես հասկանում:

Վասակ: Նոյնպէս ոչ:

Աննա: Ես բախտաւոր եմ:

Վասակ: Գեղեցիկ բան:

Աննա: Ես ամուսնուս հետ մեծ կոիւ ու-
նեցայ:

Վասակ: Եւ քո կարծիքով դա բախտաւո-
րութիւն է:

Աննա: Ինձ համար միևնույն է: Ես վերջաց-
րի նրա հետ ամեն ինչ:

Վասակ: Ներիը ինձ, ես դեռ չեմ հաս-
կանում:

Աննա: Մի խօսքով, ամբողջապէս ինչպէս
ինձ տեսնում ես, ես աղատ եմ օդի նման:

Վասակ: Ես դիտեմ որ նա տանը չէ: Այդ
ինձ աղախինը ասաց:

Աննա: Նա կը վերադառնայ միայն վերջնակա-
նապէս պայմանաւորւելու ապահարզանի համար:

Վասակ: (զարմացած վեր թռչելով): Ապա-
հարզանի:

Աննա: Դու ուրախ չես:

Վասակ: Լաւ, բայց դա կատակերգու-
թիւն է:

Աննա: Ոչ, ոչ, դու կարող ես ուրախանալ:
Ես ամբողջապէս քոնը կը լինեմ, հասկանում ես:
Ես կը տամ քեզ իմ ամբողջ սէրս, իմ ամբողջ
ժամանակս, իմ ամբողջ կեանքս: Ո՞հ, ինչ ան-
դորրութիւն: Ես ինձ ոչ միայն բախտաւոր, այլ
և արդարացած եմ համարում, ըստորում ինչ որ
ես անում էի մինչև երեկեան օրը, զգւելի բան
էր: Մինչեւ երեկեան օրը ես իբրև կին երկու
կիսամասն էի կազմում, իսկ հիմա ես դառնում
եմ կրկին մի ամբողջ կին: Ինձ զգւեցը է ա-
մէն օր բաժանել՝ ժամերս, իմ փայփայանքներս,
իմ ամբողջ էռութիւնս երկու բաժնի քո և նրա
մէջ: Ես քո դէմ խարդախութիւն էի անում: Այո՛,
իսկապէս դու էիր խարւածը: Ես խարդախում
էի քո դէմ ամուսնուս հետ, բայց դա խարդա-
խութիւն էր, ինչպէս ամեն կերպ խարդախու-
թիւն: Դու տանում էիր այդ, խղճնւկս, քո բա-
րեսըրտութեան շնորհիւ, քո ինքնազոհութեան
շնորհիւ: Բայց այժմս: Ո՞հ, այժմս, դու կարող
ես ինձ վստահաբար սիրել, առանց տանջւելու,
առանց զոհաբերութեան: Փաղաքելով նրան:

Դու զ՞ն ես: Դէ, խօսիր, դու շատ զ՞ն ես:
 Վասակ: (Ըւարած): Դիտես... այդ քայլը
 այնքան վճռական քայլ է, որ... չըդիտեմ, բայց:
 Անա: Եւ միթէ դու ինձ շնորհակալութիւն
 չես յատնի և իսկոյն:

Վասակ: Ախ, Տէր իմ Աստուած, ես գնահա-
 տում եմ քեզ ղեկավարող ամենազնիւ զգաց-
 մունքները,.. բայց եթէ դու այդ քայլը անելուց
 առաջ ինձ հարցնէիր...

Անա: (աչքերը լայն բաց արտծ:) Ճարու-
 նակէ:

Վասակ: (ուժը հաւաքելով): Դէ, լաւ: Եթէ
 դու իմ կարծիքս հարցնէիր, ես քեզ յատկապէս
 կըխնդրէի շրբաժանիլ քո ամուսնուց:

Անա: Դու

Վասակ: Ես, ես, ես:

Անա: Վասակ: Դու մտածում ես, թէ ինչ
 ես խօսում:

Վասակ: Ես չեմ հրաժարում իմ խօսքերից:
 Քո ամուսինը արժան չէ, որ նրա հետ վատ
 վարւեն: Նա ամենապատւական մարդ է: Նա օ-
 րինակելի ամուսին է: Ես յաճախ ափսոսում էի,
 որ դու նրան այդքան քիչ ես յարգում:

Անա: Իսկ դու յարգում էիր նրան:

Վասակ: Առաջինը ես նրա կինը չէի: Յե-
 տոյ տածում եմ դէպի նրան անկեղծ բարեկա-

մութիւն, ամենախորն յարգանք: Դու ինքդ ա-
 սա, ես երբ և իցէ անուշադիր եղել եմ դէպի
 Վարդանը: Ես երբ և իցէ նրա սիրալ կոտրել
 եմ: Ես նրան պատրամստել եմ որևէ իցէ անրա-
 ւականութիւն: Երբ և իցէ ես հակառակել եմ
 նրա արդարացի պահանջներին: Երբէք: Ընդ-
 հակառակը, դու շարունակ զրգուում էիր նը-
 րա ցանկութիւնների դէմ և ինձ էր վիճակում
 զսպել քո յանդգնութիւնը: Դու երբէք հոգս
 չէիր կրում քեզ իր անունը տւող մարդու
 պատիւը պահպանել, թէպէտ հարկաւոր էր յիշել
 և այն, որ եթէ դու նրա կինը չըլինէիր, հաւա-
 նական է, որ ես քեզ չէի սիրի: Եւ կարծես թէ
 այս բոլորը բաւական չէր, դու այնքան խստա-
 սիրտ էիր, որ վերաբերում էիր դէպի նրան
 անսահման արհամարանքով, դու նրա հետ վար-
 ում էիր կոպտաբար, անհաշտ, յանդուզն, ան-
 գուսպի...

Անա: (սարսափած): Ո՞հ, դու ապերախտ:

Վասակ: Դէպի ում:

Անա: Դէպի ինձ:

Վասակ: Բայց ոչ դէպի նրան: Մենք եր-
 կուսս էլ պարտական ենք նրան ամեն ինչով և
 շնորհակալութիւնը՝ այդ մեր պարտքն է:

Անա: Ի՞նչպէս, դու ամեն ինչով նրան ես
 պարտ: Իսկ ինձ ոչինչով:

Վասակ: Դա սրա հետ կապ չունի: Դու ինձ համար բարեբախտութիւն ես, իսկ նա բարեբար է:

Աննա: (կիսաբարկացոς, կիսաբնեուշ ձայնով, համարեա լալազին): Եթէ դու ինձ սիրէիր այնպէս, ինչպէս ես եմ քեզ սիրում, այնժամանակ չէիր թոյլ տալ այդ բարակ զանազանութիւնները և ինձ չէիր համոզի լաւ ամուսին լինել:

Վասակ: Բայց և այնպէս ես քեզ սիրեցի այն պատճառով, որ դու ինձ բարի ամուսին էիր թուում: Է՞հ, աւելորդ է գըա մասին խօսել: Ես այդպէս եմ կարծում: Ես ազնիւ մարդ եմ: Ես սիրում եմ ազնիւ շրջանի մէջ ասպեկտ: Եւ առաջին բանը, որը ես պահանջում եմ կին մարդուց, այդ-ազնուութիւնն է:

Աննա: Իսկ քեզ համար քիչ բան է, որ ես ամենաազնիւ սիրուհիներից մէկն եմ:

Վասակ: Ամուսին ունեցող սիրուհին, միակն է, որի հաւատաբմութեանը կարելի է հաւատ ընծայել: Դա զլիսաւոր պատճառներից մէկն է, որ ես չեմ կարող ձեր բաժանւելուն համաձայնութիւն տալ: Ես անկեղծ եմ խօսում: Առանձին ասորող կինը շատ զայթակղութիւնների է հանդի լում: Ինձ համար քո ամուսինը քո պահապանն է: Երբ նա կայ, ես հանդիսան եմ:

Աննա: (Գրգռւում է եւ աշխատում՝ նրա խօսիցի միտքը լրմբուել): Ուրեմն դու կը-նախանձէիր իմ մերձաւորութեանս ուրիշի հետ, իսկ նրա հետ ոչ:

Վասակ: Ի հարկէ: Միթէ մարդ կարող է ամուսնուն նախանձել: Ընդհակառակը նա անփոխարինելի պահապան է:

Աննա: Բայց, թոյլ տալով մինչև անզամ այդպիսի յիմար և վիրաւորական անվստահութիւնը, ով է քեզ արգելում հսկել ինձ վրայ, պահապան լինել:

Վասակ: Ո՞վ: Իմ կինս: Դու մոռանում ես, որ ես կին ունեմ և ես երբէք չեմ ցանկացել նրան արտաքսելու:

Աննա: (Տաքանակով): Ա՛, այդ ուրեմն նըրա համար է: Նրա համար:

Վասակ: Միթէ երբ և իցէ ես ինձ ձեացըել եմ ամուսի: Կամ թէ ես քեզ առիթ տւել եմ կարծել, թէ ես տաղտկացել եմ ամուսին լինելուց:

Աննա: Ես երբեք չեմ խօսել քեզ հետ քո ամուսնու մասին, փափկասիրութեան զգացմունքից...

Վասակ: Եւ շատ լաւ ես արել: Նրա մասին խօսելը կարելի է զայթացնէր քեզ նրա դէմ և զարթէցնէր իմ մէջ խզի տանշանք: Բարոյական

1001 | 1234

7/1. 1922

զգացմունքի տէր մարզը չըպէտքէ անհաշտ յարաբերութիւն թոյլ տայ իր կնոջ և սիրուհու մէջ։ Ես քեզ սիրել եմ և սիրում եմ, բայց ես ուզում եմ նոյնպէս օրինակելի ամուսին լինել, ինչպէս քո ամուսինն է։ Ահա և մի այլ պատճառ, թէ ինչու ես ձեր ապահարզանին ընդդէմ եմ։ Օրինակելի ամուսին լինելու համար, ես չեմ կարող քո վերաբերմամբ վեր առնել ինձ վրայ պարտականութիւններ... առանց բացառութիւնների։ Հասկացիք, ես քսան տարեկան չեմ։ Այժմս, երբ այդ պարտականութիւնները բաժանւած են իմ և Վարդանի մէջ, ամեն ինչ լաւ է գնում։ Բայց եթէ ես մենակ մնայի, բարդ բան կը գուրս գար։ Ինչպէս տեսնում ես, քեզ հարկաւոր է, այսպէս, թէ այնպէս, ամուսնուդ հետ հաշտւել։ Որքան ժամանակ մենք քեզ հետ ազդպէս էինք ապրում և հիմա ամեն ինչ պէտք է քայլայւի։ Մի կողմը դիր ցանցառութիւններդ և թողնենք ամեն ինչ, ինչպէս կար։

Անսա: (Կատաղած): Է՛, ոչ: Իմ վճիռս կայցած է անդառնալի: Ես կարող եմ մի կերպ տանել քո կնոջ գոյութիւնը, բայց իմ ամուսնուս-ոչ: Ես կարող եմ հաշտւել, որ քեզ ամբողջովին չեմ տիրում, բայց ոչ այն մտքի հետ, որ քեզ պատկանեմ միայն կիսով չափ: Ես կարող եմ միինչեւ անդամ, եթէ այդ անհրաժեշտ է, քո

կնոջ հետ բարեկամ մնալ, բայց բարեկամութիւնը քո և իմ ամուսնու մէջ ինձ յուսահատեցնում է, ինձ անտանելի է։ Ես ապահարզան եմ ուղում և կըստանամ։ Այնքան անկեղծ եղիք, որ ինձ ասես մի անգամ ընդմիշտ, ով է քեզ աւելի թանգ՝ ես, թէ ամուսինս։ Ո՞հ, նա էլ՝ չէ կարող առանց քեզ ապրել։ Դրանից աւելի անտեղի և գարշելի բան չըկայ։ Մեր ժամանակ խեղճ կինը իրաւունք չունի մի մարդու սիրել։ Նա իր կամքին հակառակ պէտք է տանի և նըրա բարեկամին։ Եթէ նա ուզում է բարեկամ ունենալ, պէտք է և սիրահար ունենայ։ Եթէ նա ուզում է սիրահար ունենալ, պէտք է և ամուսին ունենայ։ Հրաշալի բան։ Բայց ես կըրաժանւեմ իմ ամուսնուցս, անպատճառ կըրաժանւեմ և կամայ ակամայ՝ սքանչացած, թէ զայրացած, չնորհակալութիւնով, դու պարտաւորած կըլինես հրաժարւել նրա բարեկամութիւնից։ Թոյլ տուր ինձ գործել։ Դու այդ ինքդ չես անի։

b P b K N B P III

Ա.ՅԵՒ, Վասակ, Մանան, Վարդանյաց

Մանան: (Ծազ ներս է մտնում դիմացի դռնից, արագ եւ նշանաւոր ձայնով): *Տիկին Վարդանոյշը:*

Վասակ: Այստեղ միայն կի՞նս էր պակաս:

Վարդանոյշ: (ներս մտնելով նոյն դռնից): Կարիք չըկայ իմ մասին իմաց տալ: Այ նորութիւն (վագում է Աննայի մօս, չերմ կերպով գրկախառնումէ նրան: Աննան բոյլ է տախի իրան գրկելու, բայց գունաքափում է): Ասա ինձ, ասա, կարող եմ ես որ և իցէ կերպիւ օգտակար լինել:

Վասակ: Վերին աստիճանի օգտակար... նա սպասում էր քեզ:

Վարդանոյշ: Ուզմում ես, որ ես քո ամուսնու հետ խօսեմ:

Աննա: Ոչ, ոչ...

Վարդանոյշ: Եմ ուզում ինձ յայտնել քո վշտերը: Ահա, ես այստեղ եմ, քո կարգադրութեան հանագանդ: Մեր երկուսի մէջ գաղտնիք չըկայ, ես և դու մի անձնաւորութիւն ենք: Բաց ինձ սիրտդ, Աննա, խոստովանիք:

Աննա: Ոչ, Վարդանոյշ, այդ էլ աւելորդ է: Ներիը ինձ, ես խօսելու չեմ արամադրւած: Ես ուզում էի միայն... ինողըել քեզ, որ արգելես քո ամուսնուն խառնւել այս գործի մէջ և Վարդանի կողմից փատարանի դեր խաղալ:

Վարդանոյշ: Ուզիդն ասած, ես նրա համար եկայ, որ այստեղ բարի միջնորդութիւն անեմ,

բայց եթէ բաւականին յարգելի պատճառներ կան, այդ այլ գործ է: Քո ամուսնու արտաքինին նայելով, նա պատւական մարդ է թւում: Բայց նվ գիտէ: Մարդու և կնոջ մէջ այնքան բաներ կան... նայիր մեր երկուսի վրայ: Այստեղ բոլորովին հակառակ դէպք է: Ահա նա, այն հըրեշը (ցոյց է տախի Վասակին եւ կուրատող բնիքութիւնով), առաջին հայեացքից կարծես մեծ գին չունիք: Հստ երևոյթին, դա անտարբեր, միջակ արժանիքի տէր է, մի խօսքով, պակասութիւններով լիքը: Բայց իսկապէս—այդպէս չէ: Ոչ, ես տանը նրա վրայ գանդատւել չեմ կարող:

Վասակ: (կարծես թէժ կրակի վրայ է նըստած): Բաւական է, Վարդանոյշ: Միթէ ժամանակն է հիմա իմ անձի գովարանութիւններով հիւրասիրել:

Վարդանոյշ: Թող Աննան համեմատէ քեզ Վարդանի հետ, այդ լաւ կըլինի: Դու ոչինչ չես հասկանում (շարունակելով, Աննային): Տանը դա սիրուն տիկնիկ է—հրեշտակ է, իսկական կատարելագործւած ամուսին, հաւատացնում եմ քեզ: Մի և նոյն ժամանակ, այդ շարունակ: Նա չէ թոյլ տալիս, որ ես որ և իցէ բանի կարօտութիւն ունենամ: Զըդիտեմ՝ դա ինչպէս է նա անում—բայց նա ինձ երբէք չէ ասում «ոչ»:

Վասակ: Վարդանոյշ:

Վարդանոյշ: Ի՞նչ: Դու ամաչում ես, որ
քնքուշ ես ինձ հետ:

Վասակ: Ոչ, ես չեմ ամաչում, ես հպար-
տանում եմ դրանով, բայց դու հարկադրում ես
նրան, ով գիտէ ինչ կարծել, և յետոյ՝ դա տի-
կին Աննայի ինչ գործն է իմանալ:

Աննա: Ընդհակառակը, դա ինձ վերին աս-
տիճանի հետաքրքրում է:

Վասակ: Բայց հաւատացնում եմ ձեզ, որ
իմ կինս ամեն ինչի վրայ նայում է խոշորա-
ցոյցով... բայց նա այնքան սակաւապահանջ է...

Վարդանոյշ: Դա սուտ է:

Աննա: Ի՞նչ էք դուք ցնորսած՝ ձեր արժա-
նիքները նւաստացնելու վրայ:

Վարդանոյշ (Վասակին): Մի և նոյն ժամա-
նակ դու չես կարող ինքոք քո դատաւորը լինել:
Մենք երկուսս պէտք է քեզ դատենք: Դու ինձ
բախտաւորացնում ես և ես ուզում եմ այդ նը-
րան ասել: Որովեհտե նա ինձանից աւելի գե-
ղեցիկ է, խելօք է, չքնաղ է, ուստի նա ին-
ձանից աւելի բախտաւոր պէտք է լինի: Իսկ
եթէ զրա փոխարէն այնքան անբախտ է, ով է
ուրեմն մեղաւոր այդ բանի մէջ: Ասա ինձ, ով է
մեղաւոր:

Աննա: Խնդրում եմ քեզ, խնդրում եմ քեզ,

Վարդանոյշ, այդքան ներողամիտ մի լինիք դէ-
պի ինձ, դա ինձ ցաւ է պատճառում: Դու չը-
գիտես, չես կարող գիտնալ... Այստեղ ես եմ
մեղաւոր, հաւատած, ես եմ մեղաւոր:

Վարդանոյշ: Դա անհնարին բան է:

Վասակ: Օ՞ֆ:

Աննա: Իմ ամուսինս ոչ մի մեղք չէ գոր-
ծել իմ դէմ, բայց ես այն կանացից եմ, որոնք
իրանց շափազանց դժբախտութիւնից սիրում
են իրանց ճանապարհի վրայ կանգնած ամենա-
ստոր տղամարդկանց:

Վասակ: (Ինքն իրան): Զափազանց քաղա-
քավարի է խօսում:

Աննա: Իսկապէս այդ անպիտանութիւնը,
որ նրանց զգալի չէ, զարմանալի կերպով քա-
շում է մեզ դէպի նրանց և սիրւեցնում: Դու
աստածացնում ես պատւական մարդու, իսկ ես
աստածացնում եմ... զարշելի մարդու:

Վասակ: (Ինքն իրան): Վերին աստիճանի
հրապուրելի է:

Վարդանոյշ: (Շւարած Աննային): Դու, հը-
րէշային բաներ ես ասում:

Աննա: (Գրգուելով): Այս, հըշային... դու
եկել ես ինձ օգնելու, առանց իմանալու ինչ
կայ մէջ տեղը: Ես բաժանում եմ իմ ամուս-
նուց, ես ուրիշին եմ սիրում: Ահա քեզ բոլոր

ճշմարտութիւնը, իսկ հիմա, երբ դու զիտես
այդ, դու պատւաւոր կին ես, դու իրաւունք
ունիս ինձ իմ գլխին թողնել: Իսկ դուք, պա-
րոն Վասակ, դուք իբրև ամենաազնիւ մարդ՝
իրաւունք ունիք արդելել ձեր կնոջը ինձպէսի
հետ բարեկամութիւն անել: Յտեսութիւն,
Վարդանոյշ, կամ թէ մնաս բարեաւ յաւիտեան:
Հնազանդիր քո ամուսնու կամքին, թող նա զե-
կավարէ քեզ: Օգտւիր նրա պատէրներով, դու
ընդունակ ես այդ անելու:

(Դուրս է գնում աջակողմեան դռնից):

Ե Ր Ե Ւ Ո Յ Թ Ի Վ.

Վարդանոյշ եւ Վասակ

Վարդանոյշ: (Շւարած): Ի՞նչ կ'ասես սրա
մասին, ա:

Վասակ: Այս:

Վարդանոյշ: Ուրիշին սիրել:

Վասակ: (Լուրջ կերպով շարժում է գուլխը):

Վարդանոյշ: Գարշելի մարդու սիրել:

Վասակ: Է՞հ, ոչ:

Վարդանոյշ: Իսկ դու ճանաչում ես նրան:

Վասակ: Ես: Եթէ նրան ճանաչէի, ես իս-
կոյն կը պնայի նրա երեսին թքելու: Ես ուզում
եմ միայն ասել, թէ նա շի կարող գարշելի լի-
նել, եթէ նրան այդքան սիրում է նա: Տիկին
Աննան միշտ ճաշակով կին է եղել:

Վարդանոյշ: Ո՞րպիսի բարոյական պղտո-
րութիւն:

Վասակ: Այստեղ ուրիշ բան կայ: Եթէ Ան-
նան սիրել է նրան, նա պէտքէ է վերին աստի-
ճանի զեղեցկատես լինի... Մարճ կը զամ, որ
նա աննման է:

Վարդանոյշ: Այնուամենայնիւ ես այդ բա-
նին չեմ հաւատում:

Վասակ: Ի՞նչ բանի:

Վարդանոյշ: Ես չեմ հաւատում, որ Աննան
ընդունակ լինի իր ամուսնուն խարդախել: Ես
չէի հաւատալ, եթէ մինչև անգամ ես այդ աշ-
քովս տեսնէի:

Վասակ: Այնուամենայնիւ զա ծիծաղելի է:

Վարդանոյշ: Ես կարծում եմ, որ նա
հնարել է այդ բանը, նա ուզում է իր ամուս-
նուն պատժել՝ որ և իցէ յանցանքի համար:

Վասակ: Հիանալի է: Դու փայլուն միտք
յղացար: Պարոն Դիւմայի Փրանսելիօնը: Բայց
մինչև որ այդ գեռ կարծիքի տակ է, լաւ է քեզ
հեռանալ: Ես կը մնամ այստեղ: Ես կը մնամ որ
իմանամ ինչը ինչոց է: Եւ... հասկանո՞ւմ ես...
եթէ նա իրաւի որ մեղաւոր է և ամուսնուց
բաժանեի, այն ժամանակ ոչ ինձ և ոչ քեզ պա-
տիւ չի բերի նրանց տունը գնալ-գալ:

Վարդանոյշ: Ես այդ հասկանում եմ. բայց

իեղճ կին... ինձ այնքան ցաւալի կըլինէր...

Վասակ: (Նրա խօսքը կտրելով, հանդիսաւոր ձեւով): Ա՛, կիսկատար բանէր: Երբէք: Ես այդպէս եմ ստեղծւած: (Համբուրելով նրան): Գնա՛, գնա՛...

Վարդանոյշ (անբաւական ուզում է գնալ, բայց յետոյ վերադառնում է): Բայց ես խընդրում եմ քեզ, յամենայն դէպս խստասիրտ մի լինիր դէպի նա:

Վասակ: Լաւ ես անում, կըցանկայի... Բայց մի վախիրը: Ես գիտեմ, որ դու նրան սիրում ես և ես այդ ինկատի կունենամ:

Վարդանոյշ: Ի՞մ սիրելիս: (Դուրս է գնում):

Ե Ր Ե Ւ Ո Յ Թ Վ

Վասակ եւ Վարդան:

Վասակ: (Բայելով դէպի Աննայի սենեակը) Դու կամակոր ես: Բայց տեսնենք:

Վարդան: (Ներս է մՏնում մՏաՏանջւած եւ Վասակին տեսնելով, վազում է նրա մօս): Վերջապէս: Ես քեզ եմ որոնում: Քեզ յայտնի է:

Վասակ: Յայտնի է: Գա շատ լուրջ բան է:

Վարդան: Խելագարութիւն է:

Վասակ: Պէտք է այդ չարիքից խոյս տալ:

Վարդան: Խոյս տալ: Ես հրաւիրեցի ար-

դէն մեր փաստաբանին: Մի ժամ յետոյ նա այս-
տեղ կը լինի:

Վասակ: Դու շատ ես շտապում:

Վարդան: Այդ նա պահանջեց: Դու խօսել
ես նրա հետ:

Վասակ: Խօսել եմ:

Վարդան: Յետոյ:

Վասակ: Անօգուտ է խօսելլ:

Վարդան: Ուրեմն... եթէ դու էլ չըկարո-
ղացար նրան համոզել:

Վասակ: Բայց, սիրելիս, ես ինչպէս կարող էի
նրան համոզել: Այդ դու պէտք է հաստատամիտ
լինիս, այդ դու պէտք է եռանդով հակառակես:
Այստեղ քո ան՛մնդ է մէջտեղ դրւում:

Վարդան: Գիտեմ:

Վասակ: Քո պատիւը:

Վարդան: Ներիր ինձ, ինչու իմ պատիւը:

Վասակ: Ինչու... ինչու: Ի՞նչ հարցեր ես
տալիս: Սա պատւի գործ է, դու այդ թոյլ ես
տալիս: Եթէ թոյլ ես տալիս, դա այնպէս պայ-
ման է, ինչպէս ամեն մի պայման, որի մէջ
պարտաւորութիւնները բոլորի համար համա-
հաւասար չեն: Օրինակ, Մանւէլլ կարող է
ազնիւ մարդ կոչւել միայն այն ժամանակ,
երբ նա հեռանայ կնոջից, իսկ Մովսէսը միայն
այն ժամանակ, երբ չըհեռանայ կնոջից:

Վարդան: Եւ քո կարծիքով, իմ գործս այդ
երկրորդ կարգիցն է:

Վասակ: Ի հարկէ:

Վարդան: Ի՞նչ է քեզ անհանդիստ անում:
Եթի խիզնս արդար է...

Վասակ: (Կը սամբերով եւ գրգռուելով): Պատուի
հարցի մէջ խիզնը գործ չունի: Ես եկել եմ այս-
տեղ, որ քեզ փրկեմ և երբէք չեմ համաձայնի,
երբէք չեմ թոյլ տալ, որ քեզ հարկադրեն ապա-
հարզան կատարել:

Վարդան: Կը թոյլ տաս, թէ չես թոյլ տալ
— զա նշանակութիւն չունի: Այդ կինը հարկա-
դրեց ինձ համաձայնել: Եթէ ես շրհեռանամ, նա
կը հեռանայ: Վարդող եմ ես նրան բռնի կպչել:
Ինձ համար ապահարզանը մեծ ցաւ է, խոստո-
վանում եմ, բայց այստեղ ոչինչ չի օգնի: Վեր-
ջապէս իմ ինքնասիրութիւնը արգելում է ինձ
այլ ես նրան աղաչել: Դա ինձ համար չափա-
զանց ստորութիւն կը լինէր: Զեմ կարող, հաւա-
տա ինձ, չեմ կարող:

Վասակ: Վարդան, այդ դատարկ տեղը
ծովուել է: Հասկացիր որ քո խօսքերը զգւելի են:

Վարդան: Իմ խօսքերս զգւելի են:

Վասակ: Հասկացիր, որ այդ ձեռվ խօսելով,
դու ինձ հարկադրում ես սարսափից դողալ:

Վարդան: Ի՞նչից սարսափել:

Վասակ: Հասկացիր, որ եթէ հնար շրգտ-
նես հաշտւել քո կնոջ հետ սերտ կերպով, ես
առաջինը կ'ատեմ քեզ:

Վարդան: Բայց դու չափազանցում ես,
սիրելի Վասակ: Քո պուրիտանիզմը աւելաբա-
նութիւն է: Դա իսկական խելացնորութիւն է:

Վասակ: Այս, հասկանում եմ. խելացնորու-
թիւն է, ըստ որում դու արդէն հաշտւել ես ա-
զատութիւն ստանալու մտքի հետ: (Սաելի եւ
աւելի տաքանալով): Խելացնորդութիւն է, ըստ
որում դու ինքնապաշտ ես, և այդ ինքնապաշ-
տութեան շնորհիւ քեզ թւում է, թէ դու ար-
դէն շատ ջանք ես գործ զըել, որ կիսողդ
մօտդ պահես: Ասա ինձ, ինքը եմ, դու ի՞նչ ես
արել զրա համար: Ասա, մեկնիր ինձ. ի՞նչ
հնարքներ ես դու գործ զըել: Ի՞նչ համոզանքներ
ես հնարել, ի՞նչ աշխատութիւն մէջ բերել: (Մըրում
է երեսի frshինքը):

Վարդան: Ի՞նչ աշխատութիւն պէտք է գործ
դնէի:

Վասակ: Ամաշիր (վերին աստիճան չարա-
ցած): Գու հասել ես վերին աստիճան զազրե-
լի անամօթութեան: Ես քեզ չեմ ճանաշում...
Որքան զեղեցիկ, որքան զուրեկան բան էր:

Վարդան: Ի՞նչը:

Վասակ: Չեր ամուսնական կապը:

Վարդան: Ես այդ չեմ հերքում:

Վասակ: Նա այնքան սրտառուշ, այնքան ուրախալի էր, որ ես չեմ կարող հաշտւել ձեր ապահարզանի սարսափելի մտքի հետ... խայտառակութիւն և տնաքանդութիւն: Դա ինձ գժւացնում է, հասկացիր, այնպէս է գժւացնում, որ ես շրգիտեմ թէ ինչպիսի խելացնորութիւններ կարող եմ կատարել: (պատառում է բաւկինակը եւ նսում):

Վարդան: (Մօտենում է նրան հաղցրաբար եւ զգացւած): Բաւական է, հանգստացիր: Մի այդպէս դրզուիր: Տեսնում եմ դու էլ իմ բնաւորութիւնն ունես: Ես կըցանկայի քեզ բաւականացած տեսնել: Այս, ես կըցանկայի քեզ տեսնել հաշտած, հանգստացած: Բայց ես ինչպէս անեմ: Նրա կոշտ, յանդուգն, վիրաւորական ոճիրից յետոյ, եթէ նա ինքը շրդիմէ ինձ, հաշտութիւնը անհնար է, անհաւատալի է: Խորագատ եղիր:

Վասակ: (Վիռողաբար): Եթէ այդպէս է, ես վերջին անգամ կրիորձեմ:

Վարդան: Գեղեցիկ: Ես կըժողնեմ քեզ նրա հետ:

Վասակ: Ո՛չ, մեծապատիւ պարոն, քեզ լաւ է մալ:

Վարդան: Օ՛Փ (լուրջիւն: Յետոյ համաձայնելով): Քեզ բաւակացնելու համար, մնում եմ:

Վասակ: Հրամայիր որ նրան հրաւիրեն:

Վարդան: Դու ինքդ հրաւիրիր:

Վասակ: Միայն թէ գայ (գնում է դէպի աշու դուռը եւ կանչում): Տիկին Աննա, մի բոպէ այստեղ խնդրեմ գալ:

ԵՐԵՒՑԹՅՈՒՆ VI

Վարդան, Վասակ եւ Աննա:

Աննա: Դուք այստեղ բարոյականութիւն է-իք քարոզում, բայց այդ՝ խօսքերը քամու տալ է, գոնեա ինձ համար: Իսկ ես ուրիշ խօսք ունիմ ասելու. այս մարդը շատ է հնազանդում ձեր համոզումներին:

Վասակ: (Սասիկ սարսափած նայում է նրա վրայ, կարծես խնիրում է չըմատնել նըրան եւ լոել): Կամաց...

Աննա: Իսկ ես ոչ:

Վարդան: (Վասակին): Տեսնում ես, նա նորէն է սկսում:

Աննա: (ամուսնուն): Այս, սպասիր, թնդ նա գործ դնէ իր ճարտարախօսութիւնը, իր բոլոր դիւթականութիւնն, որ մեզ նորէն միացնէ: Սպասիր, մինչև որ նա հարկադրէ մեզ պաճուճապատանքների նման շարժւել:

Վասակ: Ներեցէք, տիկին, ես ուրիշ նպատակ չունիմ, բացի բարի գործ կատարելուց...
Աննա: Չեր կնոջ հաշւին:

Վարդան (Վասակին): Ի՞նչպէս թէ քո կնոջ հաշւին:

Վասակ: Այս, նա ասում է, հասկանում ես...
Նա ուզում է ասել, թէ ես վախում եմ... որ
ապահարզանը վատ օրինակ չըլինի կնոջս:
Համար: Բայց այդ բանի մէջ նա սխալում է.
Վարդանոյշը ամենապատւական կինն է: Նրան չի
կարելի մինչև անգամ թնդանօթի հարւածներով
հեռացնել ինձանից:

Աննա: Ինչպէս իմ ամուսնուս ինձանից:

Վարդան: Դու սխալում ես, սիրելիս:
Այժմեանից արդէն ես ամենաբախտաւոր մարդն
եմ, որ դու ինքդ ազատում ես ինձ նե-
ղութիւններից:

Վասակ: (Երեմն Վարդանին, Երեմն Ան-
նային): Զափաւորիք ոճդ, Վարդան:

Աննա: Թոյլ տէք նրան իր խելքով շարժւել:

Վասակ: Դա կոպտութիւն է, որ նա չէ զգում:
(Երեմն իւ միասին գրգռւած գոռում են, ա-
խատելով մէկը միւսի ձայնը կտրել իրաւ են
խառնում, նրանց ձեռքերը իրաւ են դիպչում,
նրանի իրաւ երում են այն ու այն կողմը):

Վարդան:

Եւ ինչու, ինչու հա-
մար ես պէտք է հար-
կագրեմ քեզ ինձ մօտ
մնալ, երբ գու ինձ
վրայ օձի, իժի տպա-
ւորութիւն ես անում:
Մի և նոյն ժամանակ
դու ինձ այլանդակ ես
թւում: Այլանդակ,
որպէս մահացումները:
Միթէ կարծում ես,
թէ բացիք եւ ուրիշ
կնանիք չկան աշ-
խարհներեսին: Մին-
չե անդամ, նթէ չը-
լինէին, մթէ երկա-
կայում ես թէ մի
կնոջ համար ես կը
տանեմ քո կոպտու-
թիմը, քո կապրիզ-
ները, քո չպայինու-
թիմը, քո շարու-
թիմը, քո թոյնը, քո
անազնութիւնը. Ոչ,
ես այդ չեմ տանիլ,
ոչ, ոչ, ոչ... Ո՞հ...

Վասակ:

Ես լիովին վշտացած
եմ այս երկու պատ-
ւոր մարդկանց խե-
լայնորութիւնից, երբ
նրանք պարտաւոր
են, զննեա, յար-
գանքով վերաբերել
իրար: Ես հասկանում
եմ, որ զուր երկուսնդ
էլ չափազանց զբգը-
ւած էք և թոյլ եմ
տալիս, թէ ձեզ ան-
հնար է ծայրակղու-
թեան շհասնել:
Բայց և այսպէս, չէ
որ ամեն ինչի սահ-
րան կայ, Տէր Աս-
տած: Խնդրում եմ,
աղաշում եմ ձեզ,
հրամայում եմ ձեզ
լոել: Բաւական է,
ուիկին, Աննա: Բաւա-
կան է, Վարդան: Բա-
ւական է, բաւական է,
բաւական է, բաւական
է, բաւական է... Ո՞հ...

Ս. 6 6 ա:

Ես այլ ևս չեմ կա-
րող տանել խելագար-
ւած, ապուշացած,
իզուր արձակւող
մարդուն, որ չէ տես-
նում, չէ հասկանում
և երբէք ոչինչ չի
հասկանաւ, ինձ զզգ-
ւեցել է այդ յիմարը,
նա տաղտկացրել է
ինձ, կաշում է ինձ
և խելագարութեան
է ինձ հասցնում: Ես
չեմ կարող այլ ևս
նրա բարեկարտու-
թիւնն մատին, նրա
յիմարութիւնների մա-
սին լսել: Այլ ևս ո-
չինչ չեմ ուզում ի-
մանալ: Ոչ, ոչ, ոչ,
ոչ... Ո՞հ...

(Աննան եւ Վարդանը մեկէն հեռանում են
մէկը միւսից սենեակի հակառակ կողմերը եւ
նսում են մէկը միւսին բամակ դարձած: Վա-
սակը հեռանում է բեմի խորքը, յետոյ վերա-
դառնում է, վեր է առնում արոռը եւ նսում

է ամուսնիների մէջտեղը: Երկարաւել լռութիւն):

Վասակ: (համարեա ինքն իրան): Եւ ահա
ինչպէս ամեն բան կարգի ընկաւ: (Կրկին լռու-
թիւն: Յետոյ կամաց կամաց վեր է կենում ա-
րոնից, մօսենում է Վարդանին եւ ցածր ձայ-
նով ասում է նրան): Եթէ նա ինքը մօտենայ
քեզ, ինչպէս դու ասում էիր, դու յիբաւի կըհա-
մածայն էիր հաշտւել:

Վարդան: (մոալ հնազանդութիւնով): Այս,
կըհամածայնէի:

Վասակ: Ուրեմն հանդարտ կաց և սպասիր:
(Կոնկում է իր վերարկուն եւ վստահաբար մօ-
սենում է Աննային: Յետոյ բարձրաձայն Վար-
դանին): Խնդրում եմ ականջ չղնել, ես պէտք է
գաղտնի մի քանի բան ասեմ քո ամուսնուն:

Վարդան: Ես բոլորովին ականջներս կըկալ-
նեմ: (մատները կոխում է ականջների մէջ):
Ահա ձեզ:

Վասակ: (Աննային ցածր ձայնով): Դու ինձ հա-
մարում ես այնպիսի մարդ, որ ընդունակ է իր
երգումը կատարել:

Աննա: (Նոյնպէս ցածրաձայն): Այս, այս, ես
քեզ ընդունակ եմ համարում... ամեն ինչի: Ասա,
շուտ, ինչ բան է:

Վասակ: (Ոռաջուայ նման շատ ցածր եւ նեանաւոր
ձայնով): Լաւ, լաիր ուրիմն: Երգումը եմ քեզ...

Եթէ դու բաժաննես քո մարդուց ես էլ քե-
զանից կըհեռանամ: (Աննան սաստիկ ցնցում է):

Վարդան: Դու արդէն ասացիր նրան:

Վասակ: Այս:

Վարդան: (ականջները կալած չե լուս նրան):
Ասացիր դու նրան ուզածդդ:

Վասակ: (Բղաւում է) Այսու:

Վարդանը: (Բաց է անում ականջները և
ձեռքերը ցածր իջեցնում: Վասակը ձեռքերը
կրծքի վրայ խաչած, սպասում է իր վերջին
փորձի հետևանիքին):

Աննա (խեղդելով իր կատաղութիւնը, Վասակի
վրայ չարացած հայեացքներ բցելով, իրար չափելով, որ-
քունքները կծելով վեր է կենում եւ դանդաղ բալերով
օտենում է Վարդանին ետելից. ձայնը կտրում է):

Վարդան: Ի՞նչ կայ:

Վասակ: (Մօսենում է Աննային եւ չափազանց
խողը ձայնով, բայց սաստիկ սպառնացով հայեացքով,
որ հնազանդութիւն է պահանջում, ասում է): Լաւ է
տիկին Աննա, բայց ամեն ինչ ցոյց է տալիս,
որ դուք զզում էք...

Աննան բոնում է նրա ձեռքը եւ սաստիկ կմէտում է:

Վարդան: (Շուռ չեկած): Ես, իրաւն ասած,
ոչինչ չեմ լսում:

Վասակ: (ցափ ալլանդակած դէմքով): Իսկ ես
զզում եմ: Համարձակ եղէք, տիկին Աննա:

Աննա: (Խեղդւած իր ատելուքիւնը զսվելուց):

Վարդան... ես միտքս փոխեցի... մենք...

Վասակ: Գեղեցիկ:

Աննա: Մենք չենք բաժանւիլ:

Վարդան: (ուրախացած վեր և բռչում տեղից եւ գրկում է նրան): Ոհ, ես հիմա ամեն ինչ մոռանում եմ, ամեն ինչ ներում եմ: Դու կըտեսնես, կըտեսնես, թէ ինչպէս մենք բախտաւոր կըլինինք: Դու կըտեսնես, ես ինչպէս օրինակելի ամուսին կըլինիմ, կըտեսնես, ոք... (յանկարծ փոխում է ձայնը եւ դիմում է Վասակին): Ի դէպ,
դու այս ինչպէս արիր:

Վասակ: Ե՛, դքա մասին յետով... ես չեմ
կարող քեզ ասել:

Աննա: (առանձին) Ի՞նչ փուչ կենդանին է:

Վարագոյր

ՀՀ Ազգային գրադարան



NL0310461

7934

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

85

af-99